

Տինսասական համահարթեցումը պետության բյուջետային քաղաքականության կարելու գործառնություններից մեկն է, որի նպատակը ֆինանսական տարբեր կարողություններ ունեցող համայնքների միջև առկա բեռնազանցման մեղմումն է, ինչպես նաև համայնքների ֆինանսական կարողությունների ամրապնդումն ու զարգացումը: Համահարթեցման սկզբունքով է կարգավորվում կառավարման տարբեր մակարդակների միջև ֆինանսական քաղաքականության իրականացման մի մասը¹: Մասնավորապես՝ կենտրոնական իշխանությունը, օրենքով սահմանված կարգով, ֆինանսական թույլ կարողություններ ունեցող համայնքներին տրամադրում է ֆինանսական որոշ միջոցներ, որոնք համայնքը ծախսում է օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման ուղղությամբ: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում ֆինանսական օժանդակությունը դաշնային բյուջեից ՌԴ սուբյեկտների բյուջեներին տրամադրվում է հետեւյալ ձևերով²:

- ՌԴ սուբյեկտների նվազագույն բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիա,
- առանձին նպատակային ծախսերը ֆինանսավորելու համար տրամադրվող սուբվենցիաներ ու սուբսիդիաներ,
- բյուջետային վարկեր,
- դրամարկղային ժամանակավոր ճեղքվածքը ծածկելու համար բյուջետային փոխառություններ:

Ինչ վերաբերում է ՀՀ-ին, համայնքների բյուջեներին տրամադրվող տրանսֆերտները երեքն են՝ համահարթեցման դոտացիաներ, սուբվենցիաներ եւ այլ դոտացիաներ:

Տեղական ինքնակառավարման կայացած համակարգ ունեցող երկրներն ունեն ֆինանսական համահարթեցման իրականացման հարուստ եւ բազմազան փորձ³: Միջբյուջետային տրանսֆերտները հատկացվում են ստորադաս բյուջեների ծախսային եւ եկամտային ցուցանիշների միջև եղած տարբերությունը համահարթելու կամ տարածաշրջանային ֆինանսական ցուցանիշները միջինին կամ նորմատիվայինին համապատասխանեցնելու նպատակով⁴: Նշվածի համատեքստում հանգում ենք այն եզրակացության, որ բոլոր դեպքերում կիրառվող համահարթեցման մեխանիզմը ծառայում է եկամուտները տեղական ինքնակառավարման միավորների միջև բաշխելու քանակական չափանիշ, եւ վերջինի հաշվարկման բանաձևի միջոցով, ըստ էության, փորձ է արվում լուծել դոտացիաների բաշխման որոշակիության եւ թափանցիկության ապահովվածությունը:

Հայաստանի Հանրապետության համար էական նշանակություն ունի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի պահանջներից բխող՝ եվրոպական երկրների համահարթեցման փորձն ու կիրառվող մեխանիզմները հաշվի առնելը: Հարկ է նկատել, որ եվրոպական երկրների մեծ մասը ոչ միայն համահարթեցնում է եկամուտները, այլև հաշվի է առնում համայնքների ծախսային առանձնահատկությունները: Համահարթեցման դոտացիաները տրամադրվում են ինչպես բոլոր համայնքներին, այն-

պես էլ միայն միջինից կամ որոշված կոնկրետ մակարդակից ցածր ֆինանսական ներուժ ունեցող համայնքներին: Նպատակն է ֆինանսական համահարթեցումը իրականացնել պարզ, մատչելի բանաձևի կիրառման միջոցով, որպեսզի համայնքներն հնարավորություն ունենան ինքնուրույն հաշվարկել դոտացիաները:

ԵՄ մեծ թվով երկրներում ֆինանսական համահարթեցման դոտացիաները հիմնականում հատկացվում են պետական բյուջեի միջոցներից, սակայն կան երկրներ, որտեղ այդ միջոցները համալրվում են առավել հարուստ համայնքների եկամուտներից (բացասական դոտացիա): Ընդունված մոտեցում է համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի մի մասը համայնքներին ուղղակի համամասնային համալրման սկզբունքով հատկացնելը, երբ համայնքների գերակշիռ մասի համար տեղական ինքնակառավարման մարմիններին ամրագրված սեփական եկամուտները չեն բավարարում պարտադիր լիազորություններին ուղղված ծախսերի ֆինանսավորմանը:

Ժամանակակից պայմաններում Հայաստանի Հանրապետությունում միջբյուջետային հարաբերությունների կատարելագործման համար էական դեր են նշանակություն կունենան ֆինանսական օժանդակության նոր մոտեցումները, հատկապես, եթե նկատի ունենանք միջհամայնքային միավորումների ու Երեւանի թաղային համայնքների միավորման ձեւավորման հանգամանքը:

ՀՀ-ում ձեւավորված կառավարման երկաստիճան համակարգում չենք կարող արդյունավետ գնահատել կառավարման տարբեր մակարդակների միջև լիազորությունների եւ համապատասխան ֆինանսական միջոցների ճիշտ տեղաբաշխում: Տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ կառավարության 08.08.2003թ. թիվ 994 որոշմամբ հաստատված Արցախի հաղթահարման ռազմավարական ծրագրում, վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացման նպատակով, տեղ գտան նաև հետեւյալ հարցերը (պատասխանատու՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարություն)⁵.

✓ համակողմանիորեն հիմնավորված սկզբունքի հիման վրա հանրապետության վարչատարածքային բաժանման օպտիմալացումը,

✓ գյուղական, քաղաքային եւ թաղային համայնքների լիազորությունների տարբերակումը եւ հստակեցումը:

Եթե Երեւան քաղաքի թաղային համայնքների միավորումն արդեն իսկ իրողություն է⁶, ապա հանրապետության մարզերում միջհամայնքային միավորումների զարգացումը դանդաղել է:

2009թ. հատկապես պատմական դարձավ Երեւան քաղաքի համար այն առումով, որ մայիսի 31-ին կայացած՝ Երեւանի քաղաքապետի ընտրություններից հետո առաջին անգամ ձեւավորեց ինքնուրույն բյուջե՝ որպես եկամուտների (մուտքերի) ձեւավորման

ՄԻԶՆԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԸՐԶԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՆՈՂ ԴՈՏԱՑԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Ատենախոսության թեմա՝
Համայնքների ֆինանսական
աջակցության կատարելագործման
հիմնախնդիրները ՀՀ-ում

Գիտական դեկավար՝
Վարդիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Դավիթ
ՕՐԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ
տնտեսագիտության
ինստիտուտի
հայցորդ

ու ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիր, որը նախատեսված է Երեւանի զարգացման ծրագրի եւ ավագանու ու քաղաքապետի՝ սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար: Երեւանի բյուջեն բաղկացած է վարչական ու ֆոնդային մասից եւ կատարվում է օրենքով սահմանված կարգով: Հարկ է նշել, որ Երեւանի բյուջեի եկամտային բազայի ձեւավորումն իրականացվում է հետեւյալ աղբյուրներից՝

- Երեւանի բյուջեն ձեւավորվում է Երեւանի բյուջեին օրենքով եւ իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերի աղբյուրներից, ներառյալ՝

- ✓ հողի հարկ՝ Երեւանի վարչական տարածքում գտնվող հողի համար,
- ✓ գույքահարկ՝ Երեւանի վարչական տարածքում գտնվող գույքի համար,
- ✓ Երեւանի տարածքում գանձվող եկամտահարկից մասհանումներ,
- ✓ Երեւանի տարածքում գանձվող շահութահարկից մասհանումներ,
- ✓ բնապահպանական վճարներից մասհանումներ,
- ✓ հողի հարկի եւ գույքահարկի գծով Երեւանի բյուջե կատարվող վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր եւ տուգանքներ,

(եկամտահարկի, շահութահարկի եւ բնապահպանական վճարների գումարներից Երեւանի բյուջե կատարվող մասհանումների չափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով)

- ✓ պետական տուրք՝ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու եւ վերականգնելու առնչությամբ վկայականներ տալու համար,

- ✓ պետական տուրք՝ նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր եւ դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու եւ դրանցից քաղվածքներ տալու համար,

- ✓ տեղական հարկեր, տուրքեր եւ վճարներ,
- ✓ Երեւանի սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ, ինչպես նաեւ Երեւանի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող այլ հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ, որոնց կառավարումը հանձնված է Երեւանի քաղաքապետին,

- ✓ Երեւանի սեփականություն համարվող այլ գույքի վարձակալությունից առաջացած եկամուտներ,

- ✓ վարչական իրավախախտումների համար քաղաքապետարանի կիրառած պատժամիջոցներից առաջացած եկամուտներ,

- ✓ Երեւանի սեփականություն համարվող կազմակերպությունների տրամադրության տակ մնացած շահույթից Երեւանի ավագանու որոշումներով կատարվող մասհանումներ,

- ✓ քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց գանձվող եւ Երեւանի բյուջեի եկամուտներին հաշվանցման եկթաւ կա վճարներ,

- ✓ Երեւանի սեփականություն համարվող, ինչպես նաեւ տիրագուրկ, ժառանգության իրավունքով, ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից նվիրատվության կարգով Երեւանին որպէս սեփականություն անցած հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհամարվող գույքի օտարումից եկամուտներ,

- ✓ պետության կողմից քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման համար Երեւանի բյուջեից ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվող հատկացումներ,

- ✓ տիրագուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից (բացառությամբ պետության, հանրապետության այլ համայնքների, միջազգային կազմակերպությունների եւ օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների) նվիրատվության կարգով

Երեւանին որպէս սեփականություն անցած դրամական միջոցներ, ✓ համայնքային սեփականություն համարվող հիմնական միջոցների, հողերի եւ ոչ նյութական ակտիվների օտարումից, ներառյալ՝ համայնքի սեփականություն համարվող լուծարված կազմակերպությունների մնացորդային գույքի օտարումից ստացվող, ինչպես նաեւ համայնքի սեփականություն համարվող պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից ստացվող միջոցներ,

- ✓ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ,

- ✓ պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ եւ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ),

- ✓ այլ աղբյուրներից ստացվող պաշտոնական դրամաշնորհներ,
- ✓ վարկերի եւ փոխառությունների ձեւով ներգրավված միջոցներ, ընդ որում՝ քաղաքապետարանի թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցներ՝,

- ✓ Երեւանի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, ինչպես նաեւ տվյալ տարվան նախորդող (եզրափակված) բյուջետային տարիներին Երեւանի բյուջեից տրամադրված բյուջետային փոխառության վերադարձից տվյալ տարում ստացվող մուտքերը,

- ✓ Երեւանի վարչական տարածքում տեղաբաշխված իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), ներառյալ՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից եւ օտարումից ստացված միջոցներ՝ ստացվող մուտքերի 30%-ի չափով, որոնք ուղղվում են Երեւանի բյուջեի ֆոնդային մաս՝ համաքաղաքային կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորմանը: Նշված միջոցները փոխանցվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բացված հատուկ հաշվին, որը Երեւանի ավագանին բացառապէս կարող է ուղղել ՀՀ կառավարության հետ համաձայնեցված ծրագրերի ֆինանսավորմանը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Երեւանում արդյունավետ տեղական ինքնակառավարում եւ տարածքային կառավարում իրականացնելու, Երեւանի տեղական ինքնակառավարման մարմինները բնակչության առավել մատչելի դարձնելու նպատակով Երեւան քաղաքը բաժանվում է վարչական 12 շրջանների (Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավիթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Զանաշեն-Չեչոյան)՝:

Նկատի ունենալով վերոնշյալը՝ կարծում ենք, որ Երեւան քաղաքում, ինչպես նաեւ ձեւավորվող միջհամայնքային միավորումներում, տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման համաչափությունն ապահովելու համար հույժ կարելի էր նշանակություն կունենա համահարթեցնող դոտացիաների բաշխման նոր մոտեցումը: Այն կառուցվել է հետեւյալ քայլերին համապատասխան.

- միջհամայնքային միավորման մեջ ներառված համայնքների (Երեւան քաղաքում թաղային համայնքների միավորման՝ այսուհետ վարչական շրջաններ) նվազագույն բյուջետային ապահովվածությունն նորմատիվների սահմանումը,

- միջհամայնքային միավորման մեջ ներառված համայնքների (Երեւան քաղաքում վարչական շրջանների) եկամուտների պայմանական մեծության հաշվարկը,

- պլանային տարվա համար միջհամայնքային միավորման մեջ ներառված համայնքների (Երեւան քաղաքում վարչական շրջանների) սեփական եկամուտների կանխատեսումը՝ առանց հաշվի առնելու միջբյուջետային տրանսֆերտները,

- պլանային տարվա համար միջհամայնքային միավորման մեջ ներառված համայնքների (Երեւան քաղաքում վարչական շրջանների) նվազագույն ծախսերի մեծության հաշվարկը,

- միջհամայնքային միավորման մեջ ներառված համայնքների (Երեւան քաղաքում վարչական շրջանների) ծախսային պահանջը ճշգրտող գործակցի հաշվարկը,

- միջհամայնքային միավորման մեջ ներառված համայնքների (Երեւան քաղաքում վարչական շրջանների) բյուջետային ապահովվածության հաշվարկային մակարդակի որոշումը,

- միջհամայնքային միավորման մեջ ներառված այն համայնքների (Երեւան քաղաքում վարչական այն շրջանների) համար դոտացիա հաշվարկ, որոնք ունեն հաշվարկային բյուջետային ապա-

հովվածության համահարթեցման չափանիշի ձևով հաստատված մակարդակից ցածր մակարդակ,

- հատկացումների լրացուցիչ նորմատիվի հաշվարկ,
- միջհամայնքային միավորման մեջ ներառված համայնքներին (Երեւան քաղաքում վարչական շրջաններին) բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի բաշխումը:

Քայլ 1. Բյուջետային ապահովվածության հաշվարկային մակարդակը որոշելու համար անհրաժեշտ է կիրառել միջհամայնքային միավորման մեջ (Երեւան քաղաքում վարչական շրջանների միավորման մեջ) ներառված համայնքների բյուջետային ապահովվածության նվազագույն նորմատիվները: Վերջինները հաշվարկային ցուցանիշներ են, որոնք արտացոլում են համայնքների բյուջեների ծախսերը իրենց լիազորությունները կատարելու դեպքում համայնքային նշանակության հարցերը որոշելիս՝ նորմատիվներով քանակական (ֆիզիկական) փոփոխականի միավորի հաշվով:

Քայլ 2. Միջհամայնքային միավորման մեջ (Երեւան քաղաքում վարչական շրջանների միավորման մեջ) ներառված i-րդ համայնքի բյուջեի եկամուտների պայմանական մեծությունը հաշվարկային ցուցանիշ է, որը բնութագրում է պլանավորվող ֆինանսական տարում այդ համայնքի եկամտային հնարավորությունները: Եկամուտների աճի հնարավորությունը 5%-ից պակաս չզննհատելու դեպքում նպատակահարմար է կիրառել խթանման գործակիցը՝ $K=1.05$: Ամբողջական ձևով i-րդ համայնքի բյուջեի եկամուտների պայմանական մեծությունը կարող ենք հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$D_i = 105^* C_i - A_i (1),$$

որտեղ՝

i-ին միջհամայնքային միավորման մեջ ներառված համայնքների թիվն է (Երեւան քաղաքում վարչական շրջանների միավորման դեպքում i=12),

D_i - պլանավորվող ֆինանսական տարում միջհամայնքային միավորման մեջ (Երեւան քաղաքում վարչական շրջանների միավորման մեջ) ներառված i-րդ համայնքի բյուջեի եկամուտների պայմանական մեծությունն է,

C_i - պլանավորվող ֆինանսական տարում միջհամայնքային միավորման մեջ (Երեւան քաղաքում վարչական շրջանների միավորման մեջ) ներառված i-րդ համայնքի բյուջեի սեփական եկամուտների կանխատեսվող մեծությունն է,

1.05 - խթանման գործակիցն է,

A_i - պլանավորվող ֆինանսական տարում միջհամայնքային միավորման մեջ (Երեւան քաղաքում վարչական շրջանների միավորման մեջ) ներառված i-րդ համայնքի բյուջեում այն եկամուտներն են, որոնք ստացվում են վարչական տույժերի ձևով:

Քայլ 3. Միջհամայնքային միավորման մեջ (Երեւան քաղաքում վարչական շրջանների միավորման մեջ) ներառված i-րդ համայնքի բյուջեի սեփական եկամուտների մեծությունը պլանավորվող ֆինանսական տարում յուրաքանչյուր աղբյուրից՝ եկամուտների ընդհանուր մեծությունն է:

i-րդ համայնքի բյուջեի սեփական եկամուտների մեծության կանխատեսումը համապատասխան ֆինանսական տարվա համար կհաշվարկվի հետևյալ բանաձևերով.

$$C_i = \sum_y T_{iy} (2) \text{ եւ } T_{iy} = T_{iy0} * P_{iy} (2)$$

որտեղ՝

C_i - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի բյուջեի սեփական եկամուտների կանխատեսված մեծությունն է,

T_{iy} - օրենքով, պլանավորվող ֆինանսական տարում, y - եկամտի աղբյուրից կանխատեսվող այն մուտքերն են, որոնք ամրագրված են i-րդ համայնքի բյուջեին,

T_{iy0} - նախորդ ֆինանսական տարում y եկամտի աղբյուրից կանխատեսվող մուտքերն են, որոնք ամրագրված են i-րդ համայնքի բյուջեին,

P_{iy} - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված y եկամտի աղբյուրից մուտքերի կանխատեսման գործակիցն աճն է (նվազումը):

Քայլ 4. Պլանավորվող տարում i-րդ համայնքի բյուջեի նվազագույն ծախսերը որոշակի տեսակի բյուջետային ծախսերով նվազագույն ապահովվածության j-րդ նորմատիվի եւ տվյալ նորմատիվի քանակական (ֆիզիկական) փոփոխականի արտադրյալն է:

i-րդ համայնքի բյուջեի նվազագույն ծախսերի մեծության հաշվարկը պլանավորվող ֆինանսական տարում կարող ենք իրականացնել հետևյալ բանաձևով՝

$$MP_i = \sum_y (MH_{ij} * \Pi_{ij}) (3)$$

որտեղ՝

MP_i - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի բյուջեի նվազագույն ծախսերի մեծությունն է,

MH_j - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի որոշակի տեսակի բյուջետային ծախսերով նվազագույն ապահովվածության j-րդ նորմատիվն է,

Π_{ij} - i-րդ համայնքի բյուջետային ծախսերով նվազագույն ապահովվածության j-րդ նորմատիվի քանակական (ֆիզիկական) փոփոխականն է:

Պլանավորվող ֆինանսական տարում համայնքների բյուջեների նվազագույն ծախսերը ներառում են օրենքով եւ նորմատիվային այլ փաստաթղթերով համայնքային սեփականության կազմում ընդգրկվող սոցիալական նշանակության օբյեկտների պահպանման ծախսերը:

Քայլ 5. i-րդ համայնքի ծախսային պահանջը ճշգրտող գործակիցը ցույց է տալիս, թե բոլոր համայնքների միջին մեծության համեմատ որքանով են ավելի (պակաս) բնակչության մեկ շնչի հաշվով տվյալ համայնքի բյուջետային միջոցները, որոնք անհրաժեշտ է ծախսել պլանավորվող տարում ամրագրված լիազորություններն իրականացնելու համար: i-րդ համայնքի ծախսային պահանջը ճշգրտող գործակիցի հաշվարկման բանաձևը հետևյալն է.

$$KPI_i = \frac{MP_i/H_i}{\sum_j MP_j/H_j} (4),$$

որտեղ՝

KPI_i - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի ծախսային պահանջի ճշգրտման գործակիցն է,

MPI_i - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի բյուջեի նվազագույն ծախսերի մեծությունն է,

$\sum_j MP_j$ - պլանավորվող ֆինանսական տարում միջհամայնքային միավորման մեջ ընդգրկված բոլոր համայնքների նվազագույն բյուջետային ծախսերի ընդհանուր մեծությունն է,

H_i - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

H - միջհամայնքային միավորման բնակչության թիվն է:

Քայլ 6. i-րդ համայնքի եկամուտների բյուջետային ապահովվածության հաշվարկային մակարդակը պլանավորվող ֆինանսական տարում այդ համայնքի մեկ բնակչին բաժին ընկնող հաշվարկային եկամտի մեծությունն է: Այն կարող է ստացվել տվյալ համայնքում եկամուտների պայմանական գնահատման արդյունքում՝ ելնելով բոլոր համայնքների համանման ցուցանիշների միջինից եւ հաշվի առնելով բոլոր այն գործոնները, որոնք ազդում են i-րդ համայնքի մեկ բնակչի հաշվով տրամադրվող բյուջետային ծախսությունների արժեքի վրա:

i-րդ համայնքի եկամուտների բյուջետային ապահովվածության հաշվարկային մակարդակը պլանավորվող ֆինանսական տարում հաշվարկելու համար օգտվենք հետևյալ բանաձևից.

$$BO_i = \frac{1}{KPI_i} * \frac{(D_i/H_i)}{\sum_j D_j/H_j} (5),$$

որտեղ՝

BO_i - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության հաշվարկային մակարդակն է պլանավորվող ֆինանսական տարում մինչեւ բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի բաշխումը,

D_i - i-րդ համայնքի բյուջեի եկամուտների պայմանական գնահատումը է պլանավորվող ֆինանսական տարում,

$\sum_j D_j/H_j$ - միջհամայնքային միավորման մեջ ներառվող բոլոր համայնքների բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների միջինն է պլանավորվող ֆինանսական տարում, որը հաշվարկվում է համայնքների եկամուտների պայմանական գնահատումների հիման վրա,

KPI_i - i-րդ համայնքի ծախսային պահանջը ճշգրտող գործակիցն է պլանավորվող ֆինանսական տարում,

H_i - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

H - միջհամայնքային միավորման բնակչության թիվն է:

Քայլ 7. i-րդ համայնքի համահարթեցման բյուջետային ապահովվածության դոտացիան տրամադրվում է պլանավորվող ֆինանսական տարում այդ համայնքի բյուջետային ապահովվածության համահարթեցման նպատակով այն դեպքում, երբ համայնքի բյուջետային ապահովվածության մակարդակը ցածր կլինի համայնքների համահարթեցման բյուջետային ապահովվածության հաշվարկային չափանիշից:

i-րդ համայնքին տրամադրվող բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի հաշվարկման բանաձևը հետևյալն է.

$$O = KPI_i * H_i * \left[\left(\sum_i \Delta_i \right) / H \right] * (K - BO_i) \quad (6),$$

որտեղ՝

O_i - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի համահարթեցման բյուջետային ապահովվածության դոտացիան է, KPI_i - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի ծախսային պահանջը ճշգրտող գործակիցն է, H_i - i-րդ համայնքի բնակչության թիվն է, Δ_i - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի բյուջեի եկամուտների պայմանական գնահատականն է, $(\sum_i \Delta_i) / H$ - միջհամայնքային միավորման կազմում ներառվող բոլոր համայնքների բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների միջին մեծությունն է, որը հաշվարկվում է այդ համայնքների եկամուտների պայմանական գնահատման հիման վրա, H - միջհամայնքային միավորման բնակչության թիվն է, K - համայնքների համահարթեցման բյուջետային ապահովվածության հաշվարկային չափանիշն է, որին համապատասխան իրականացվում է բյուջետային ապահովվածության համահարթեցումը, BO_i - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության հաշվարկային մակարդակն է՝ մինչև համահարթեցման դոտացիան տրամադրելը:

Քայլ 8. Օրենքով միջհամայնքային միավորման կազմում ներառվող համայնքների բյուջեներին ամրակցված եկամուտների աղբյուրից հատկացումների լրացուցիչ նորմատիվը տրամադրվում է այն համայնքների բյուջեներին, որոնցում բյուջետային ապահովվածության հաշվարկային մակարդակը ցածր է որպես չափանիշ ընդունվող համահարթեցման բյուջետային ապահովվածության հաշվարկային մակարդակից եւ փոխարինում է այդ համայնքի համահարթեցման բյուջետային ապահովվածության հաշվարկային դոտացիային կամ դրա մի մասին:

i-րդ համայնքի բյուջե ամրակցված եկամուտների աղբյուրից հատկացումների լրացուցիչ նորմատիվի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta H_i = O_i / \Gamma_i * 100 \text{ եթե } O_i < (\Gamma_i - Te_i) \quad (7),$$

$$\text{կամ } \Delta H_i = (\Gamma_i - Te_i) / \Gamma_i * 100 \text{ , եթե } O_i \geq (\Gamma_i - Te_i) \quad (8),$$

որտեղ՝

ΔH_i - i-րդ համայնքի բյուջե եկամուտներից լրացուցիչ նորմատիվային հատկացումն է պլանավորվող ֆինանսական տարում՝ ըստ հաստատված եկամուտների աղբյուրների,

O_i - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի մեծությունն է,

Γ_i - i-րդ համայնքի բյուջեին պլանավորվող տարվա համար ամրակցված եկամուտների աղբյուրներից մուտքերի կանխատեսված մեծությունն է,

Te_i - i-րդ համայնքի բյուջեին պլանավորվող տարվա համար միասնական նորմատիվային հատկացումների կանխատեսված մեծությունն է:

Քայլ 9. Բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի ընդհանուր մեծության հաշվարկման բանաձևը հետևյալն է.

$$O = \sum_i O_i \quad (10), \text{ իսկ } O = O_1 + O_2 \quad (9),$$

որտեղ՝

O_1 - համայնքներին բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի ընդհանուր մեծությունն է,

O_2 - պլանավորվող ֆինանսական տարում i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի մեծությունն է,

O_1 - համայնքներին բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի առաջին մասն է, որը փոխարինվում է համայնքային բյուջեների եկամտային աղբյուրներին ամրակցված լրացուցիչ նորմատիվային հատկացումներով,

O_2 - համայնքներին բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի երկրորդ մասն է, որը նախատեսված է համայնքային բյուջեներին ֆինանսական օժանդակության հիմնադրամներից միջբյուջետային տրանսֆերտների ձևով:

Համայնքներին բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի առաջին մասի հաշվարկման բանաձևը հետևյալն է.

տեղյալն է.

$$O_1 = \sum_i O_i^{(1)}, \text{ իսկ } O_i^{(1)} = \Delta H_i * \Gamma_i \quad (10),$$

որտեղ՝

O_1 - համայնքներին բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի առաջին մասն է, որը փոխարինվում է համայնքային բյուջեների եկամտային աղբյուրներին ամրակցված լրացուցիչ նորմատիվային հատկացումներով,

$O_2^{(1)}$ - i-րդ համայնքին տրամադրվող դոտացիայի այն գումարն է, որը փոխարինվում է համայնքի բյուջեի եկամտային աղբյուրներին ամրակցված լրացուցիչ նորմատիվային հատկացումներով,

ΔH_i - i-րդ համայնքի բյուջե ամրակցված եկամտային աղբյուրներից լրացուցիչ նորմատիվային հատկացումն է,

Γ_i - i-րդ համայնքի բյուջե ամրակցված եկամուտների աղբյուրներից կանխատեսված մուտքերի մեծությունն է պլանավորվող տարում:

Համայնքներին բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի երկրորդ մասի հաշվարկման բանաձևը հետևյալն է.

$$O_2 = \sum_i O_i^{(2)}, \text{ իսկ } O_i^{(2)} = O_i - O_i^{(1)} \quad (11),$$

որտեղ՝

$O_2^{(2)}$ - համայնքներին բյուջետային ապահովվածության համահարթեցման դոտացիայի երկրորդ մասն է, որը նախատեսվում է համայնքներին միջբյուջետային տրանսֆերտների ձևով,

O_2 - i-րդ համայնքին տրամադրվող համահարթեցման դոտացիայի մեծությունն է, որը տրվում է ֆինանսական օժանդակության հիմնադրամներից միջբյուջետային տրանսֆերտների տեսքով,

$O_i^{(1)}$ - պլանավորվող տարում i-րդ համայնքին տրամադրվող համահարթեցման դոտացիայի մեծությունն է,

$\sum_i O_i$ - i-րդ համայնքին տրամադրվող համահարթեցման դոտացիայի ընդհանուր մեծությունն է, որը փոխարինվում է համայնքային բյուջեների եկամտային աղբյուրներին ամրակցված լրացուցիչ նորմատիվային հատկացումներով:

Մեր կարծիքով՝ առաջարկված մոտեցումը հնարավորություն կընձեռնի առաջիկայում համահարթեցման դոտացիան առաջին հերթին տրամադրել միջհամայնքային միավորման կազմում ներառվող կարիքավոր համայնքներին, ինչն արդյունքում կկապատի միջհամայնքային ամբողջ միավորման տարածքային զարգացման ներդրակազմության ապահովմանը:

1. Մովսիսյան Վ.Ռ., ֆինանսական համահարթեցման մեխանիզմի զարգացումը Հայաստանում, Եր., Նոյյան տապան, 2007, էջ 6
2. Бюджетный кодекс Российской Федерации, М. 2004, Статья 133.
3. Thurow L., The Theory of Grants-in-Aid-national Tax Journal, 1966, #19, pp. 375-376.
4. Gramlich E., Intergovernmental Grants: A Review of the Empirical Literature, In: The political Economy of Fiscal Federalism, Datas W. (ed.), Lexington, MA: D.C. Heath and Company, 1977, pp. 221-235.
5. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.), Գիրք 2, Դ. Թումանյանի խմբ., Եր., Նոյյան տապան, 2008, էջ 31
6. 2010թ. կիստակեցվեց երեւանի քաղաքապետի եւ վարչական միավորների ղեկավարների միջեւ հիմնական բոլոր գործառնությունները:
7. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Գլուխ 4, 3-րդ կարգով 70
8. Նույն տեղում, 3-րդ կարգով 73
9. Քաղաքապետարանի կողմից պարտատոմսեր թողարկելու եւ տեղաբաշխելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:
10. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Գլուխ 5, 3-րդ կարգով 86
11. Օրենքով պարտադիր ամրամրված են համայնքային բյուջեների եկամուտներին:

Օգտագործված գրականություն

1. Մովսիսյան Վ.Ռ., ֆինանսական համահարթեցման մեխանիզմի զարգացումը Հայաստանում, Եր., Նոյյան տապան, 2007, էջ 6
2. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.), Գիրք 2, Դ. Թումանյանի խմբ., Եր., Նոյյան տապան, 2008, էջ 31
3. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Գլուխ 4, 3-րդ կարգով 70 եւ 73, Գլուխ 5, 3-րդ կարգով 86
4. Бюджетный кодекс Российской Федерации, М. 2004, Статья 133.
5. Thurow L., The Theory of Grants-in-Aid-national Tax Journal, 1966, #19, pp. 375-376.
6. Gramlich E., Intergovernmental Grants: A Review of the Empirical Literature, In: The political Economy of Fiscal Federalism, Datas W. (ed.), Lexington, MA: D.C. Heath and Company, 1977, pp. 221-235.